

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ,

—Տղերք, ասաց տանուտէրը իր մօտ կանգնած

Ժիւղ թէ կարելի լինի հակակնտրոնակա-
նութեան սկզբունքները վրա հիմնել, երբ այս
վերջին կազմակերպութեան ժամանակ դէպի
ուրիշներն ոյժերը և բարեմասութիւնը պէտք
է կատարել հաւատ ունենալ: Այս բոլորը
ի նկատի ունենալով, գիտութեան այդ վերա-
նորոգութիւնը միայն թղթի վրա կը մնայ,
առանց իրագործվելու, մանաւանդ որ թէ
գիտութեան միջնորդութեան գլխաւորը և
թէ նրա օգնականները մնում են նոյն Օս-
ման-փաշայ, նոյն Վերվիլ-փաշա և այլն, այս-
ինքն այնպիսի անկեղծ, որոնք ծնվել են հին
ձեռք ժամանակ և որոնք ամեն տեսակ վերա-
նորոգութիւնները անկարելի գործ են հա-
մարում:

Ընդհանուր գիտութեան գաղափարը
Թիւրքիայի համար աւելի օտար և աւելի
անիրագործելի է: Այդ հարցի մասին իւրա-
քանչիւր թիւրք շատ որոշ է խօսում: Ընդ-
հանուր գիտութեան գործը ատելի է թէ
թիւրքերի և թէ քրիստոնեաների համար:
Քրիստոնեաներին Մահմեդի գործերի կարգում
կանգնեցնելը բոլորովին հակառակ է Թիւր-
քիայի պետական և կրօնական կազմակեր-
պութեանը: Թիւրքացի գործերի կրօնական ըս-
կզբունքները վրա հիմնած կազմակերպու-
թեան ոյժը կը թուլանայ քրիստոնեայ տար-
րի պատճառով: Կրօնական բաժանումն, ատե-
լութիւն և արհամարհանք, փոխադարձ ան-
հատարմունքներ, այս բոլորը կը տիրեն
Թիւրքացի գործերի մէջ: Քրիստոնեայ ժողո-
վուրդները, որոնք դարերով ստուկներ են ե-
ղի, կորցրել են գիտութեան հարկաւոր բարո-
յական յատկութիւնները, գիտութեան ոգին:
Անկախած այդ քրիստոնեաների գիտութեան
ոգին և տաղանդը կարելի է նորից գարգեց-
նել, բայց զարթեցնող ոյժը երբեք չէ կա-
րող լինել կիսալուսնի դրօշակը, այն դրօշակը,
որ դարերով ձգտել է քրիստոնեաներին ըստ-
րուկներ դարձնել: Այդպէս են մտածում ի-
րանք թիւրքերը քրիստոնեաների գիտութեան
ծառայութեան մասին: Իրանք քրիստոնեանե-
րը աւելի էլ թշնամութեամբ են վերաբեր-

վում այդ նոր հարցին: Քրիստոնեաները ա-
տուժ են թիւրքերին, խորը համոզմունք են
Թիւրքիայի քայքայման մէջ և նրանցից իւ-
րաքանչիւր ազգութիւն, բայց հայերից, հակ-
վում են այս կամ այն պետութեան կողմը:
Հայերն էլ ձգտում են անկախութիւն ստա-
նալ, ուրեմն իրանց արիւնով Թիւրքիայի
պաշտպանելը բոլորովին վնասակար է քրիս-
տոնեայ ժողովուրդների բարոյական և կեն-
սական շահերին:

Այդ վերանորոգութեան աջակցութեանը ոչ
չէ հաւատում, այդ գործի վրա ամենքը
նայում են ինչպէս դատարի Ֆրանկերի վրա,
որոնցով Թիւրքիան կամենում է զբաղեցնել
արեւմտեան Ներքալային և նրանից փող ստա-
նալ:
Բոլոր այդ ասածները ճշմարտութիւնը հաս-
տատվում է և նրանով, որ կառավարութիւնը
այնպիսի հեշտութեամբ է վերաբերվում դէ-
պի այդ գլխաւոր վերանորոգութիւնը, որ
կարծես նա բոլորովին բաղադրեալ չը լինի:
Եւրաքանչիւր պետութեան գիտութեան կազ-
մակերպութեան մեքենան աւելի բաղադրեալ
է լինում, երբ այդ պետութեան մէջ գտնա-
վան ազգութիւններ են ապրում և այդ ազ-
գութիւններից կազմվում են գործերը: Թիւր-
քիայի գիտութեան կազմակերպութեան մե-
քենան աւելի էլ դժուար պէտք է լինի:
Բ. Դուռը գիտութեան ծախսերի քչաց-
նելը սրտով ցանկանում է, նա մի անգամ
գործերին 48 ամիս ուժով չը տուէր: Իր նը-
պատակին հասնելու համար թիւրքացի կա-
ռավարութիւնը կամենում է գործող գործերի
թիւը պակասեցնել: Այդ միջոցը մասամբ
հասնում է նպատակին: Մասնաւոր մասամբ
միայն կը պակասեն, որովհետեւ խնայած դու-
մարի մասը հարկաւոր կը լինի ուժեղացած
Բէլիշի գործերի վրա ծախսելու:

ԻՏԱԼԻԱ

Հռոմից «ГОЛОСЪ» լրագրի ստացել է հե-
տեւեւ թղթագրութիւնը:
Այն կրկնում, որ տիրում էր թէ կառա-
վարութեան, թէ ազգային ժողովի և թէ
հարկու ոսկի պարգևել վաղի ծառային, որ բերել
է այդ ձին:
Տանտուէրը այժմ հասկացաւ բէկի օբիեքացաւոր,
թէ ինչ մտքով էր եկել իր տունը: Բայց, որպէս
ստանում են, օբիեքը կտուր դրեցին, պատասխա-
նեց:
— Ինչ կայ, տուեցէք, հարկու ոսկին չառ չէ
մի այսպիսի ձիւն համար:
— Քրդին ու թէ տուել փող, ասաց բէկը մի-
փոքր բարկացած ձայնով:— Եւր անխժած արծաթե
ձեւ, հայերից, մօտ է գտնվում միշտ:
Բէկի մօտ նստած ազգականները, որ բոլոր
ժամանակը լուռ էին, խօսակցութեան մէջ մտան:
Նրանցից մէկը ասաց.
— Դուք էլ միթէ փողի դարդ էք քաշում, բէկ,
— քաւոր խաչոն երբ է թողել, որ դուք փողի կա-
րօտութեան ունենաք:
— Աստուած վկայ է, որ այդպէս է, ասաց միւսը:
— Քաւոր խաչոն չառ լաւ մարդ է, աւելացրեց
երրորդը:— Նրա համար բոլոր հայերի մէջ չը կայ:
Երբեմն խաչոն նկատեց, որ հակառակ իր հա-
մութեան և կազմին, իր վրին դրեցին հարկու ոս-
կին, և կատարեցին տեղից չը տալով, պատաս-
խանեց.
— Ես հաղար ոսկու համար ես բէկի սիրտը չեմ
կտորի:
— Եւն մնայ ձեռք տուել, ձայն տուեցին քրդերը:
Տանտուէրը վրա կացաւ, և դուրս գալով օդա-
յից, իր մօտ կանչեց մեծ որդուն և ասաց, որ
ծառայել գնայ յարգանքով թագաւոր ոսկիներից
հարկու հատ բերէ:
— Ինչի համար է, հարցրեց որդին:
— Դու չես իմանում, որ անօրէններն եկան, կե-
րան, խմբին, հիմայ պէտք է մի զր իշքի ր ա ի ի
էլ տանք, պատասխանեց հայրը տխուր ձայնով:
— Աստուած ձեռք քոքը (արմատը) կտորէ, անի-
ծածներ, ասաց որդին, և կիթոցը վրա առնելով,
դիմեց դէպի յարգանքով, որպէս թէ գնում է
յարդ բերելու:
«Գլխաւոր» նշանակում է ատմաների վարձ, մի
այսպիսի վարձ ստանում էին քրդերը մի ժամա-

սենտարի մէջ, վերջապէս միջովացաւ: Կառ թէ
փառ այնու ամենայնիւ միջովացաւ: Փաղաւո-
րը ինքը բաց արեց պարմենտը, որի բաց-
ման ժամանակ ներկայ էր և Փաղաւոն: Քր-
ստան և վեց նոր սենատորներն նշանակու-
հրամանը կարգաւորում էր բոլոր փողոցնե-
րում:

Խոսքի վերջապէս հանգիստ շունչ քա-
շեց: Բայց այդ հանգստութիւնը երկար կը
տևի թէ ոչ, ոչ որին յայտնի է: Պարլամեն-
տական խառնակութիւնները, միջնորդների
անհամաձայնութիւնը, ամենասահմանաւոր վե-
րանորոգութիւնների անցկացնելու անկար-
գութիւնը, չափազանց խրճրճել էին Խոսքի-
յի ներքին գործերը: Պարլամենտի երկու
թշնամական կուսակցութիւնների ներկայա-
ցուցիչները, հանրապետական Վայրօլի և ըս-
պիտակ Դեպրետիս, որոնք երեք տարի շա-
րունակ պատերազմում էին միմեանց հետ և
մօտաւորապէս իւրաքանչիւր վեց ամենակից
յետոյ խլում էին միմեանցից միջնորդական
պաշտոնը աշունքին վաղացան և մէկ միմիա-
տութիւն կազմեցին: Պարզ երևում է, որ
խառնակութիւնը չափազանց էր և այն ա-
ռարկան, որի պատճառով հակառակորդները
միացան, չափազանց նշանակաւոր: Այդ առար-
կայի նշանակութեամբ թիւրք ստիպեց հակառա-
կորդներին միանալ: Այդ առարկան հարկերի
և ուրիշ մի քանի հարցերի օրէնքի վերանո-
րութեանն էր:

Բայց իւրի և ջրի այդպիսի անանկալ մի-
ութիւնը ցանկալի հետեւանքներ չունեցաւ և
միջնորդական գործերը առաջ չէին գնում:
Միջնորդների ազգային ժողովի մէջ կարգա-
նում էին մի բան անել, բայց նոքա անկարող
եղան սենատը համաձայնեցնել ազգային ժո-
ղովի հետ:

Խոսքի վերջապէս սահմանադրութեան յօդուած-
ներից մէկը իրաւունք է տալիս թագաւորին
սենատորներ նշանակել և այդ յօդուածը նշա-
նակելի սենատորների թիւը չէ չափաւորում:
Այդ դէպքում թագաւորը, ընտրելով սենա-
տի անդամներին, ի նկատի է ունենում, թէ
նոքա ինչքան կարող են օգնել առաջարկող
միջնորդին այս կամ այն հարցը սենատին մէջ
անցկացնելու համար: Նոր հռոմում յայտնի
եղաւ որ թագաւորը մտադիր է օգուտ քաղել
յիշեալ իրաւունքից, բոլոր ազատամիտ տար-
րերը խառնալու միտքով: Ամենից առաջ
վերջոված էին սենատի անդամները, որոնց
պէտք է հեռացնել թագաւորը և նրանց տեղ
նորերին նշանակել և այդպիսով սենատին մե-
ծամասնութիւնը պէտք է աննշան փոքրա-
մասնութիւն դարձնէր: Վերջոված էր սե-

նատի այն կուսակցութիւնը, որ կարծում էր
թէ իր անդամների թիւը կը պակասի, վեր-
ջոված էին այն մարդիկ, որոնք յոյս ունէին
ժողովրդից ընտրվել:

Ժողովները բացանկող ճառաջ ժողովուր-
դի մէջ լուր էր տարածվել, որ թագաւորը
ներկայ չի գտնվի: Այդպիսի լուրերը միշտ
վերջովում են հասարակութիւնը իւրաքանչիւր
սահմանադրական պետութեան մէջ: Վերջա-
պէս խօսում էին, որ թագաւորը մտադիր է
60 սենատորներ նշանակել: Ամեն բան հան-
գստացաւ, երբ թագաւորը ներկայացաւ
պարլամենտը և մի կարծ ձայնով նրան բաց
արաւ. վերջապէս յայտնի եղաւ, որ երթա-
ղրված 60 սենատորների տեղ, թագաւորը
միայն 26 է նշանակել: Փաղաւորի ձառը
ողևորութեամբ ընդունվեցաւ:

Նոր նշանակված սենատորների մասին այս-
քան միայն յայտնի է, որ նոքա կառավա-
րութեան իւրաքանչիւր առաջարկութիւնը կը
պաշտպանեն:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 փետրվարի «ПРАВИТ.
ВѢСТНИКЪ» լրագրի հարցում է, որ ժան-
դարների շէջ գնեալ Նրենտեր իր խնդրի
համեմատ արձակված է իր պաշտօնից և նը-
շանակված է Պետական Խորհուրդի անդամ,
մնալով գեներալ-ադյուտանտի կոչման մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 փետրվարի: Պետական
բանկի 5% տոմսակի առաջին շրջանի արժէ
94 ռ., երկրորդ 92 ռ. 75 կ., երրորդ 93 ռ.
50 կ., չորրորդ 93 ռ.: Ներքին 5% առաջին
փոխառութեան տոմսակը արժէ 225 ռ. 50
կ., երկրորդ 224 ռ. 25 կ., արեւելեան առա-
ջին փոխառութեան տոմսակը 89% ռ., եր-
կրորդ 90 ռ., երրորդ 90 ռ., ոսկի 7 ռ. 77
կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա 25%
պէնս, ռուսաց 100 ռուբլ Կերմանայի վրա
127 մարկ 25 պէնս, Փարիզի վրա 265 Ֆր.
25 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 մարտի: Ներկէ Ս. Պե-
տերբուրգից Երկրորդի դուքսին տանող եր-
կաթուղու գնացքը 390-դ վերստի վրա դի-
պաւ ապրանքի գնացքին: Նրկու վազօններ
կտրված են: Մարդկեանցը տարաբաղու-
թիւն չէ պատահել:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

—Ստեփանիկ, ես տեսնում եմ, դու անասուն-
ներ սիրում ես, դրա համար ես կուղարկեմ քեզ
իմ նորահաս քուսակներից մէկը:
—Ձիւններ չեմ սիրում:
—Ապա ինչ ես սիրում:
—Ահա այսպիսի այնքաններ, եղջերուներ, կա-
քաւներ եմ սիրում:
—Շատ լաւ, դրանից յետոյ իմ որսերից որն
կենդանի մնացած կը լինի, քեզ համար կուղար-
կեմ:
Շառաւերը իմացում տուին, թէ ձիւնները պատ-
րաստ են:
Բէկը նորհալութիւն յայտնելով տանուէրին,
դուրս եկաւ նրա տնից. դրան առջև կանգնացրել
էին գեղեցիկ նոյզը: Ինքը ծերունի խաչոն ձիւն
ասպանդակը բռնելով, նստեցրեց բէկին: Դա պա-
տուի մեծ նշան էր, որով տանուէրը ցոյց էր
տալիս իր ծառայութիւնը դէպի պատուելի հիւրը:
Նստելով ձիւն վրա, քուրը ցնդապետը շարժեց
ձեռքի երկայն յիւղակը, խաղաղեց ձին, և մնաք
բարով ասելով տանուէրին, հեռացաւ: Ծերունին
երկար անարժ կանգնած, նրա ետեւից նայում էր:
Նա տեսաւ, թէ որպէս բէկը իր ձին կրկին թոց-
րեց խրամից, արամարհելով կամուրջը, որի վրա-
յից անց էին կենում, նրա կարծիքով, թոյլ և ան-
զօր արարածները միայն: Նա տեսաւ, թէ որպէս
հետամուտ եղաւ նա թիւրի միջից յայտնվող նա-
պատակին, և արծուի արագութեամբ նրա ետեւից
հասնելով, ցցեց նիզակը խեղճ անասունի կողքին:
Այդ բոլորը տեսնում էր նա, մի և նոյն ժամանակ
նրա գլխում անց էին կենում այսպիսի մտածու-
թիւններ. «Ինչու այսպէս է երկրի և երկնքի դա-
տաստանը. քուրը հաց չունի ուտելու, հացը վա-
րում է, ցանում է և նրա համար պաշար է պատ-
րաստում... քուրը գեղեցիկ նոյզը ընծայ է ըս-
տանում, նստում է, զուարճանում է, գետնից դո-
ղացնում է իր որսերի տակ, իսկ հայն է տալիս
նրա փողը... հայը, որ բացի աւանակից մի ուրիշ
անասունի վրա նստելու իրաւունք չունի...»

(Կը չարունակվի)

